

ՈՒՂԻՂ ԽՆԴՐԻ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՍԱԿԱՆ ԳՐԱՔԱՐՈՒՄ

ՍՆՐԴՈ ՀԱՅՐԱՊԵՏՑԱՆ

Արդի հայերենագիտության մեջ առ այսօր շոշափվել են գրաբարի ուղիղ խնդիր լրացումների շարադասությանը վերաբերող մասնակի հարցեր միայն, այն էլ՝ գրաբարի շարահյուսական այլ իրողությունների առնչությամբ ծագած անհրաժեշտության բերումով: Բոլոր դեպքերում, առանց էական փոփոխությունների, ընդունվել է անցյալի քերականագիտությունից ժառանգված կարծիքը հին հայերենի ուղիղ խնդրի հտադաս դիրքի կանոնականության մասին¹: Սակայն շեղումներն այդ կանոնականից այնքան բազմաթիվ են, որ անհրաժեշտություն է առաջանում հարցը ենթարկել ամենամանրամասն վիճակագրական քննության: Այդ առիթով ընտրել ենք հատվածներ V դ. թարգմանական և ինքնուրույն մատենագրական երկերից: Քննությունը կատարել ենք ըստ V դ. հայերենի առանձին ժամանակահատվածների՝ մեսրոպյան և եսմեսրոպյան շրջանների: Աշխատել ենք պարզել, թե ուղիղ խնդրի շարադասության տեսակետից կա՞ն արդյոք էական տարբերություններ թարգմանական և ինքնուրույն մատենագրական երկերի լեզվում ընդհանրապես և առանձին հեղինակների լեզվում՝ մասնավորապես:

Աստվածաշնչից ընտրված հատվածները, որոնք ակնհայտ տարբերություններ ունեն նյութի բովանդակության, ոճի տեսակետից, ընդհանրառում են ուղիղ խնդիրների ընդգծված հտադասությամբ: Դրանցում դիտարկված 791 ուղիղ խնդիրներից 619-ը հտադաս գործառություն ունեն (տե՛ս աղյուսակ 1): Այդ հատվածների լեզվում ընդամենը 22% կազմող առաջադաս ուղիղ խնդիրների գերակշիռ մասն էլ հարցական և հարաբերական դերանուններով արտահայտված լրացումներ են, որոնք առաջադաս են ոչ միայն Աստվածաշնչում, այլև ընդհանրապես գրաբարում: Օրինակ՝ «Զի՞նչ տեսանիցէք ի սոմնացիդ» (Երգ-երգոց, է, 1): «Զամենայն զո՞րինչ և առնիցէ, յաջողեսցի նմա» (Սաղմ., Ա, 3), «...դինչ կարիցեմ առնել քեզ» (Յովբ, է, 20), «Զի՞նչ հատուցուք մեք Աստուածոցն...» (Եղ., 18): «Զինչ է այդ զո՞ր դուքդ գործէք» (Ն. տ., 47), «...զոր պատրաստական գտանէր նմին փութոյ հաւանեար» (Կոր., 42) և այլն²: Սա պատճառաբանվում է այդ դերանունների խոսքիմա-

¹ Պ ա ղ տ ա ս ար Դ պ ի Ր, Պարզաբանութիւն քերականութեան, դիւրիմաց և կարճառօտ, Կ. Պոլիս, 1771, Գ. Ա վ ե տ ի ք ե ա ն, Քերականութիւն հայկական, Վենետիկ, 1815, Յ. Վ. Կ ո ս տ ան դ ի ն ո պ ո լ լ ի ս ե Յ ի, Զտութիւն հայկաբանութեան կամ քերականութիւն հայկական, Հռոմ, 1674, Ա. Բ ա գ Ր ա տ ո լ ի, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, Ս տ. Մ ա լ խ ա ս յ ա ն ե, Գրաբարի համաձայնությունը, Քիֆլիս, 1892 և այլն:

² Ս. Գրքից քաղված օրինակների համար փակագծերում տրվում են գլուխները և տողերի համարները. մատենագիրներից Ագաթանգեղոսի երկից քաղված օրինակների համար նշվում են պարբերության հատվածների համարները, իսկ մնացած դեպքերում փակագծերում տրվում են էջերը:

սային իմաստի և այդ իմաստով պայմանավորված գործառական առանձնահատկություններով:

Միևնույն ժամանակ հատվածների լեզվում չափազանց սակավ են անվամբ, դերբայով, անձնական և ցուցական դերանուններով արտահայտված առաջադաս ուղիղ խնդիրները, և ս. Գիրքը նախապատվությունը սովորաբար տալիս է ձևաբանական նման արտահայտություն ունեցող ուղիղ խնդիրների ետադասությունը: Ակնհայտ է, որ գրաբարի ինչպես հին, այնպես էլ հետագա ուսումնասիրողները ուղիղ խնդիրների ետադաս դիրքի խիստ կանո-

Աղյուսակ 1

№	Գիրք, գլուխ	Ետադաս ս.դ. խ.	Առաջադաս ս.դ. խ.	Ընդ.
1	Գիրք Ծննդոց, Ա-ԱԴ	93	21	114
2	Գիրք Մաղմուսաց, Ա-Թ	82	29	111
3	Յուլբ, Ա-Զ	80	33	113
4	Երգ-երգոց, Ա-Ը	95	20	115
5	Գործք Առաքելոց, Ա-Գ	74	38	112
6	Աւետ. ըստ Մատթ., Ա-Դ	102	9	111
7	Գիրք Առական, ԻԱ-Լ	93	22	115
Ընդամենը		619	172	791

նականության դադարի և են հանգել Աստվածաշնչի լեզվական տվյալներն աչքի առաջ ունենալով: Այնինչ, այս հարցում Աստվածաշնչի փաստերից եզրակացության հանգելը ճիշտ չի լինի այնքանով, որքանով ս. Գիրքը ինքնուրույն ստեղծագործություն չէ, այլ թարգմանական երկ, որի բնագրի լեզվին հատուկ է ուղիղ խնդրի ընդգծված ետադասությունը:

Ի տարբերություն Աստվածաշնչի, մեսրոպյան շրջանի մատենագրության լեզուն թեև մեծ չափով գործածում է և՛ առաջադաս, և՛ ետադաս ուղիղ խնդիրներ, սակայն մատենագիրների մեծ մասը (բացառությամբ Ագաթանգեղոսի) առավել հակված է ուղիղ խնդրի առաջադաս գործառությանը (տե՛ս աղյուսակ 2): Պետք է կարծել, որ Ագաթանգեղոսի Պատմության լեզվում ուղիղ խնդրի ետադաս կիրառության ձգտումը պայմանավորված է այն հանգամանքով, որ այս երկը, զանազան աղբյուրներից (մեծ մասամբ հունարենից) կատարված «մասամբ թարգմանական, մասամբ ինքնագիր խմբագրություն»³ լինելով, կրում է (ինչպես և Աստվածաշնչը) ուղիղ խնդրի ետադասությունը նախասիրող հունարենի որոշակի լեզվական ազդեցությունը:

Նկատի ունենալով, որ Եզնիկը տարբեր աղանդների դեմ մղած իր փիլիսոփայական բանակումում օգտվելով հունարեն, պարսկերեն և այլ աղբյուրներից, իր «Եղծ աղանդոց»-ում, հավանաբար, կունենա դրանց ազդեցությունը շարադասության տեսակետից, վիճակագրությունը կատարել ենք նրա գրքի տարբեր գլուխներից: Եզնիկի՝ հստակություն և կանոնավորություն փայլող լեզվում, որը մեր հին գրավոր լեզվի մեսրոպյան շրջանի բնորոշ օրինակն է⁴,

³ Մ. Աբեղյան, Երկեր, հ. Գ, Երևան, 1968, էջ 184:

⁴ Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Թարգմանությունը Ա. Աբրահամյանի, Երևան, 1970, էջ 21:

ուղիղ խնդրի առաջադասությունը եռակի անգամ գերազանցում է նրա հտադասությունը:

Երբ համեմատում ենք V դ. հայերենի (մատենագրության հատվածների) վիճակագրության արդյունքները, նկատում ենք, որ համեմատական շրջանի մատենագրության լեզվում առաջադաս և հտադաս խնդիրների հարաբերակցությունն աստիճանաբար փոխվում է հօդուտ հտադասի: Վերջինս դանդաղորեն

Աղյուսակ 2

№	Մատենագիր, դիրք, գլուխ	Ծտադաս ուղ. խ.	Առաջադաս ուղ. խ.	Ընդ.
1	Եզնիկ, «Եղծ աղանդոց» Գ. 2, Ե-ԻԱ	38	75	113
2	Եզնիկ, «Եղծ աղանդոց» Գ. 3, Ա-Բ	35	69	104
3	Կորիւն, «Վարք Մաշտոցի» Ա-Բ, ԺԵ-ԻԲ	99	137	236
4	Փ. Բիւզանդ, «Պատմութիւն Հայոց» 4, ԺԵ	74	73	147
5	Աղաթանդեղոս, «Պատմութիւն Հայոց», ԺԸ-ԻԱ	96	36	132
Ընդամենը		342	390	732

Աղյուսակ 3

№	Մատենագիր, դիրք, գլուխ	Ծտադաս ուղ. խ.	Առաջադաս ուղ. խ.	Ընդ.
1	Եղիշէ, «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» (4 եղ.)	71	41	112
2	Մ. Խորենացի, «Պատմութիւն Հայոց», Գ. 2-րդ, Ա-Է	68	43	111
3	Եղիշէ, «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» (2 եղ.)	51	67	118
4	Մ. Խորենացի, «Պատմութիւն Հայոց», Գ. 3-րդ, Ա-ԺԲ	73	39	112
5	Ղ. Փարպեցի, «Պատմութիւն Հայոց», գր. Բ., ԽԱ	75	38	113
Ընդամենը		338	228	566

սակայն հաստատապես ձգտում է վերածվել ուղիղ խնդրի կանոնական դիրքի (տե՛ս աղյուսակ 3): Պատճառը, կարծում ենք, դարի երկրորդ կեսում զորեղացող այն գրական հոսանքն է, որը հայտնի է հունաբանություն անունով: Այն ոչ միայն թափանցել է գրաբարի շարահյուսության ոլորտը, այլև իր շատ իրողություններով որոշակի փոփոխության է ենթարկել լեզուն: Որ, իրոք, հունաբանության ազդեցությունից անմասն չի մնացել նաև գրաբարի շարա-

դասությունը՝ հաստատվում է Նդիշեի օրինակով։ Վերջինս, որ այդ շրջանի պատմիչներից համեմատաբար ամենաքիչն է տուրք տվել հունաբանությանը, որոշ հատվածներում նախընտրում է հտադաս խնդիրները, որոշ հատվածներում էլ՝ հակառակը։ Իսկ Մ. Խորենացու և Ղ. Փարպեցու պատմություններից քաղված բոլոր հատվածների լեզվում արդեն տիրապետողը հտադաս ուղիղ խնդիրներն են։

Այսպիսով, մատենագիրների երկերից քաղված տվյալները վկայում են, որ V դ. հայերենում հավասարաչափ գործածական են ուղիղ խնդրի դիրքային երկու տարբերակներն էլ, սակայն հատկապես դարի երկրորդ կեսից սկսած գործառության ավելի մեծ հաճախականություն են դրսևորում հտադասով ուղիղ խնդիրները։ Ծթե V դ. գրաբար մատենագրության լեզուն ընդգծված ձևով չի նախընտրում հտադաս խնդրի գործածությունը, ապա թարգմանական ամբողջ գրականությունը՝ ընդհակառակը։ Վերջին դեպքում հտադասով ուղիղ խնդիրների գերազանցությունը պայմանավորող հանգամանքը թարգմանիչների կողմից՝ թարգմանվող լեզվի շարահյուսական իրողություններին հարադատ մնալու ձգտումն է, որը համասրուպյան մատենագրության լեզվում կապվում է նաև հունաբանության լեզվական աղղեցության հետագա աճի և այդ պատճառով՝ ժողովրդախոսակցական ոճից աստիճանաբար հեռանալու իրողությունների հետ⁵։

Ասվածից պարզ է, որ բավարար հիմքեր չունենք պնդելու, թե V դ. մատենագրության լեզվում միակ կանոնականը ուղիղ խնդրի հտադասությունն է, և, հետևաբար, նրա առաջադաս կիրառությունները միշտ չէ, որ պետք է դիտել իբրև շրջուն, այլ՝ միանգամայն բնական շարադասություն։

Մատենագրության լեզուն, որը պահանջում է առավել մտածված և պարզ շարադրանք, կառուցվածքային ավարտվածություն, անցողական բայով շարահյուսական կառույցների ոչ լրիվության շատ փաստեր չունի։ Այդպիսի կառույցներում ուղիղ խնդրի բացակայությունը քերականորեն և իմաստաբանորեն թերաբեք է դարձնում բայը։ Ուղիղ խնդրի առկայությունը, եթե մի կողմից բայի անցողականության քերականական զորեղ ցուցիչն է, մյուս կողմից անցողական բայի իմաստային լիարժեքության դրսևորման միջոցն է։ Սակայն բայի և խնդրի միասնության մեջ, ի տարբերություն շարահյուսական այլ կառույցների (որոշիչ-որոշյալ, հատկացուցիչ-հատկացյալ), որոնք սովորաբար արտահայտում են մեկ, թեկուզ և մասնատված հասկացություն, առկա են «գործողություն» և «առարկայական օբյեկտ» հասկացությունները առանձին-առանձին։ Հենց բայական բառակապակցությունների բաղադրիչների իմաստային թույլ միասնությունն էլ հանգեցնում է այդպիսի բառակապակցություններում բառերի շարադասության անկայունության։

Բայական անգամի խնդիր լրացման շարադասության համեմատաբար մեծ ազատությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ լրացման ազատ տեղաշարժերը բաղադրիչների ոչ միայն շարահյուսական հարաբերությունների, այլև շարահյուսական կապակցության ձևի փոփոխություն

⁵ V դ. մատենագիրների լեզվում ժողովրդախոսակցական ոճավորում ունեցող հատվածների վիճակագրական քննությունը ցույց է տալիս, որ, այսպես կոչված, ժողովրդական խոսքը համեմատաբար առատ է առաջադաս ուղիղ խնդիրներով. երևույթ, որն առավել ընդորոշ է մեսրոպյան շրջանի պատմիչների լեզվին։

չեն առաջացնում (անկախ շարադասությունից, ուղիղ խնդիրը բայի սեռի պահանջով սովորաբար ձևավորվում է հայցական հոլովով): Մինչդեռ՝ լրացյալի նկատմամբ իմաստային ավելի սերտ միասնությունն ունեցող որոշիչը նախադաս գործածության ժամանակ կորցնում է ետադաս դիրքին հատուկ թվային և հոլովական համաձայնությունը գերադաս անդամի հետ: Ուղիղ խնդրի դիրքային յուրաքանչյուր տեղաշարժն արդյունք է մի շարք գործոնների, որոնք արտահայտում են նախադասության և՛ բովանդակության, և՛ արտահայտության ուղղության իրողությունները: Խնդրի այս կամ այն դիրքը պայմանավորված կարող է լինել ինչպես մեկ առանձին գործոնի անմիջական ազդեցությամբ, այնպես էլ շարադասական մի քանի գործոնների միաժամանակյա առկայությամբ: Վերջին դեպքում այդ գործոնները հաճախ բխվում են, փոխներդրվում և դրանով իսկ՝ ուժեղացնում կամ թուլացնում միմյանց: Շատ դեպքերում դժվար է որոշել, թե դրանցից ո՞րն է հատկապես առաջնային դեր խաղում ուղիղ խնդրի շարադասության մեջ: Այդ պատճառով, գրաբարի ուղիղ խնդրի շարադասության ամբողջական պատկերը ստեղծելու համար, որը հիմնական մոմենտներում լինի ճիշտ, իսկ մանրամասների մեջ՝ դիպուկ⁶, անհրաժեշտ է. նախ՝ բացահայտել և բավարար հստակությամբ վերլուծել այն բոլոր գործոնները, որոնք պայմանավորում են նախադասության մեջ ուղիղ խնդրի այս կամ այն դիրքը, երկրորդ՝ հնարավորության սահմաններում տալ այդ գործոնների օբյեկտիվ գնահատականը՝ հաշվի առնելով, ինչպես յուրաքանչյուրի ազդեցության ուժը, այնպես էլ դրանց միջև ճշգրիտ փոխհարաբերությունները՝ դասակարգելով ու խմբավորելով դրանք ըստ նշանակության:

Այսպես. գործոնների մի խումբ առանձնանում է մյուսներից այն հանդամանքով, որ որոշում է ուղիղ խնդրի քերականական դիրքերը նախադասության մեջ. դրանց ազդեցությամբ խնդիրը շարադասվում է ըստ իր քերականական նշանակության և քերականական ձևի: Ուղիղ խնդրի շարադասության քերականական դիրքերը պայմանավորող գործոնները գրաբարում հետևյալներն են. ուղիղ խնդիր լրացման խոսքիմասային պատկանելությունը, լրացման շարահյուսական արտահայտության եղանակը (ծավալայնությունը, ոչ ծավալայնությունը, բառով, բառակապակցությամբ կամ դերբայական դարձվածով արտահայտվելը), խնդրառու բայի սեռային հատկանիշի դրսևորման աստիճանը, բայի իմաստը, նախադասության կառուցվածքը, բնույթը, կազմությունը (թերի և լրիվ), խնդրառու բայի դիրքը նախադասության կառուցվածքում, լրացյալի հետ խնդրառական կամ իմաստային անմիջական կապեր ունեցող այլ լրացումների առկայությունը և այլն: Շարադասական այս և այլ գործոնները, միավորելով մեկ ընդհանուր անվան տակ, կոչում ենք խնդրի շարադասության ձևաիմաստային կամ ֆեռալանկալն սկզբունք, իսկ տվյալ շարադասությունը՝ քերականական շարադասություն: Այս սկզբունքի համաձայն, ուղիղ խնդիրը շարադասվում է խնդրառու բայից առաջ կամ հետո, այդ դիրքերից յուրաքանչյուրում նրա նկատմամբ ունենալով և՛ կից, և՛ նախադասության այլ անդամներով միջնորդավորված գործառություններ: Ուղիղ խնդրի քերականական դիրքերը կարելի է անվանել նաև խնդրի սովորական դիրք-

6 Զ. Զովհաննիսյան, Որոշիչ-որոշյալ կապակցությունը գրաբարում, Երևան, 1972:

7 В. Матезиус, Основная функция порядка слов (сб. «Тражский лингвистический кружок», М., 1967).

քեր, սրա տակ հասկանալով ուղիղ խնդրի՝ հիշյալ գործոններով պայմանավորված տեղը մինչև այն պահը, քանի դեռ շարադասության այլ բնույթի գործոններ այդ դիրքերից նրան չեն տեղաշարժել: Նկատի ունենք այնպիսի գործոններ, ինչպիսիք են շեշտը, հնչերանգը, խոսքի բնույթը, ժանրը, որոնց ազդեցությամբ խնդիրը նախադասության մեջ գրավում է ոճականորեն կամ տրամաբանորեն շեշտված դիրքեր: Վերահիշյալ գործոնները խմբավորում ենք շարադասության երկրորդ սկզբունքի մեջ, անվանելով այն առանձնացման սկզբունք:

Իր սովորական քերականական դիրքերից խնդրի տեղաշարժերը կարող են պայմանավորված լինել շարադասության մեկ այլ իրադրա-կոնտեքստային (կապակցման) սկզբունքով: Ինչպես խնդիրների, այնպես էլ նախադասության այլ անդամների շարադասության հարցում այս սկզբունքը հիմնվում է հաղորդման իրադրության և կոնտեքստի ազդեցության ու դերի վրա: Այս սկզբունքի համաձայն, ուղիղ խնդիրը շարադասվում է ըստ նախորդող կամ հաջորդող նախադասությունների կամ դրանց առանձին հատվածների հետ սովյալ նախադասության ունեցած իմաստային և տրամաբանական կապի: Նախադասությունների իմաստային կապակցվածության մեջ հանդես գալով մտքի հիմնական առարկայի դերում, խնդիրը դրվում է նախադասության սկզբում կամ վերջում՝ ծառայելով հայտնիից դեպի անհայտը մտքի հաջորդական հոսքի արտահայտմանը, այդ ընթացքում նաև խիստ ընդգծվելով կամ իր վրա վերցնելով նախադասության տրամաբանական շեշտը: Այսինքն՝ ուղիղ խնդիրների շարադասության առանձնացման և կապակցման սկզբունքների միջև գոյություն ունի օրգանական միասնություն:

Խնդիրը կարող է շարադասական անսովոր դիրքեր ունենալ նաև այն դեպքում, երբ ոճականորեն ընդգծված չէ: Երբեմն նախադասության այլ անդամներ (ենթակա, ստորոգյալի լրացումներ և այլն) շարադասական որևէ գործոնի ազդեցությամբ, զբաղեցնում են խնդրի սովորական-քերականական դիրքը՝ նրան թողնելով իմաստային տեսակետից ոչ էական և տրամաբանորեն չընդգծվող դիրքում (թույլ կամ չեզոք դիֆֆերի սկզբունք): Այդպիսի դիրքերը ուժեղ ընդգծման կամ այլ պատճառներով տեղաշարժված անդամների նախկին քերականական դիրքերն են, որոնք խնդրի համար վերածվում են չեզոք կամ աննկատելի դիրքերի: Եվ քանի որ յուրաքանչյուր այդպիսի դիրք, վերջին հաշվով, շեղում է խնդրի քերականական շարադասությունից, նշանակում է ընդհանրության եզրեր գոյություն ունեն շարադասության առանձնացման, կապակցման և չեզոք դիրքերի սկզբունքների միջև: Թվարկված սկզբունքները բնութագրում են ուղիղ խնդրի շարադասական տեղաշարժերը ոչ միայն բայական լրացյալի, այլև նախադասության այլ անդամների հետ փոխադարձ կապի և պայմանավորվածության մեջ:

Ուղիղ խնդրի շարադասության բերականական սկզբունք.— Գրաբարի

⁸ Անհրաժեշտ է հստակ տարբերակել բերականական և բերականացված դիրքեր հասկացությունները: Բերականացված է վերլուծական կառուցվածքի լեզուների շարադասությունը, որոնցում րադի տեղը պայմանավորում է նրա քերականական գործառույթը նախադասության մեջ: Անգերենում, օրինակ, ստորոգյալին հաջորդող բայը ուղիղ խնդիր է: Գրաբարում, որտեղ քերականական մոմենտը խնդրի շարադասության ոչ պակաս կարևոր գործոններից է, խնդրի քերականացված դիրքեր չեն նկատվում:

ուղիղ խնդրի շարադասական տեղաշարժերը բազմազան են, և դժվար է նրա դիրքային յուրաքանչյուր տարբերակը չափած-ձևած կանոնների տակ դնել: Այնուամենայնիվ, հոգւածի սահմաններում փորձենք ներկայացնել նրա մի շարք դիրքերի վերլուծութիւնը և այն գործոններից մի քանիսի նկարագրութիւնը, որոնք ձևավորում են լրացման քերականական շարադասութիւնը:

1. Առանձնակի հետաքրքրական է պատճառական բայերի ուղիղ խնդրի շարադասութիւնը, ինչպես վկայում են մեր կատարած վիճակագրութեան տվյալները, ուղիղ խնդիրը, սովորաբար, հետադասվում է պատճառական բայ-ստորոգյալին: Պատճառական բայերի ուղիղ խնդրի շարադասութիւնը որոշակի կախման մեջ է երկու հանգամանքից. առաջին՝ առկա է արդյոք նախադասութեան ենթական, և երկրորդ՝ ինչպիսի՞ն է պատճառական բայի իմաստը (յի՞նչ սկզբնաձևից է այն առաջացել): Նշենք, որ ներգործական բայով նախադասութեան ենթակայի և ուղիղ խնդրի փոխհարաբերութիւնը, որն իրականանում է բայի գործողութեան միջոցով, զգալիորեն տարբեր է պատճառական բայով նախադասութեան քերականական սուբյեկտի և օբյեկտի միջև դրսևութուն ունեցող հարաբերութիւններից: Վերջին դեպքում, ինչպես գրում է Ա. Ս. Երրահամյանը, «Ուղիղ խնդրի մեջ, պայմանավորված լրացյալի պատճառականութեամբ, իշխում է ոչ միայն կախյալութեան գաղափարը, այլև՝ ցածր, եղջիւր նշանակութիւնը»⁹: Այս լրացուցիչ քերականական իմաստը երկկայմ նախադասութեան մեջ պատճառական բայի ուղիղ խնդրի համար ապահովում է ստորոգյալին հաջորդող դիրք հատկապես այն դեպքում, երբ նախադասութեան ենթական (պատճառական բայով գործողութեան սուբյեկտը, որի մեջ, ի տարբերութիւն ներգործական բայի ենթակայի, առկա են և՛ գործողութիւն կատարողի, և՛ միջնորդողի իմաստները) գտնվում է ստորոգյալից առաջ: Օրինակ՝ «Արդարեւ իսկ շաբթե... ի տարակուսի կացուցանեն զբազմս» (ՆՆ., 16), «Իսկ նա այնչափ յիմարեցոյց ափշեցոյց զմիտս մոգպետին» (ՆՆ., 64), «Արշակ Մեծ թագաւորեցուցանէ զեղբայր իւր զՎաղարշակ ի վերայ աշխարհիս Հայոց» (ՄհՊՁ, 87):

Առաջադաս ենթակայի առկայութեան դեպքում կրող խնդրի՝ պատճառական բային հետադասվելը քերականորեն անհրաժեշտ է այնքանով, որքանով ենթակայի քերականական գործառույթի մեջ առկա են ոչ միայն գործողի, այլև գործողութեան միջնորդողի գաղափարները: Եվ գործողի լրացուցիչ քերականական իմաստով օժտված խնդրի դիրքն աննպատակահարմար է ու ոչ ցանկալի զլիսավոր անդամների միջև, որովհետև որոշակիորեն մեկուսացնում է ենթակային գործողութեան պրոցեսից՝ նրան վերապահելով առավելապես գործողութեան միջնորդողի գեր ու նշանակութիւնը նախադասութեան մեջ: Նույն այդ պատճառով, եթե ենթական ընկնում է պատճառական բայ-ստորոգյալից հետո, ապա, սովորաբար, ավելի մոտ է շարադասվում ստորոգյալին, քան հետագա ուղիղ խնդիրը: Գրաբարում հաճախ է հանդիպում «ստորոգյալ+ենթակա+ուղիղ խնդիր» կառուցվածքային վերահիշյալ տարբերակը: Օրինակ՝ «...բարկացոյց նա զԱստուած» (Թիւք, ԺԵ, 30): «Մոռացոյց ինձ Աստուած դամենայն վիշտս իմ» (ՄՆ., ԽԱ, 51): «Թագաւորեցուցանէ մերս Արտաշէս զհամանուն իւր զԱրտաշէս որդի նորին...» (ՄհՊՁ, 85):

Եթե ենթական ընկնում է նախադասութեան վերջը, պատճառական բայի

⁹ Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, գ. 1, Երևան, 1962, էջ 535:

ուղիղ խնդիրն իր ետադաս քերականական դիրքից, վերը նշված պատճառով, անցնում է ստորոգյալին նախորդող դիրք, որը մեծ մասամբ ենթակայի նախկին սովորական դիրքն է պատճառական բայով երկկազմ նախադասություններում: Այսպիսի դեպքերում նախադասությունը ունի «ուղիղ խնդիր + ստորոգյալ + ենթակա» կառուցվածքային տարբերակը, որտեղ ուղիղ խնդրի առաջադասությունը չունի ընդգծման նպատակ, այլ հիմնականում պայմանավորված է ենթակայի դիրքային տեղաշարժով՝ ընդգծման նպատակով նախադասության վերջը ընկնելու հանգամանքով¹⁰:

Ուղիղ խնդրի վերահիշյալ դիրքը համապատասխանում է նախադասության անդամների շարադասության շեղոք դիրքերի սկզբունքի մեր սահմանմանը այնքանով, որքանով խնդրի նման դիրքը պայմանավորված է նախադասության այլ անդամների շարադասական տեղաշարժերով: Միևնույն ժամանակ, եթե նկատի առնենք, որ խնդրի այսպիսի դիրքը հատուկ է մեծ մասամբ պատճառական բայերի ուղիղ խնդիր լրացմանը, ապա հասկանալի կլինի, որ նման կառուցվածք ունեցող նախադասություններում ուղիղ խնդրի առաջադաս դիրքը արդյունք է շարադասական երկու տարաբնույթ՝ ձևադասատային և շեղոք դիրքի սկզբունքների փոխապայմանավորված և միաժամանակյա գործառություն:

Հասկանալի պատճառներով ավելի աղատ է ուղիղ խնդրի շարադասությունը պատճառական բայով թերի (զեղչված ենթակայով) նախադասություններում: Օրինակ՝ «նստեցուցանե՛լ զօր ի քաղաքին» (ՄեՊՇ, 130): «Իմացուցանեմ դոցա զճրամանս Աստուծոյ» (Ելք, ԺԸ, 16), բայց՝ «Մքեցս ոսկւոյ և արծաթոյ... բազմացոյց» (ՄեՊՇ, 72): «Զեւս գործոյ պատերազմին դիտել տայր» (ՂՓՊՇ, 155) և այլն: Եթե պատճառական բայի ուղիղ խնդրի շարադասությունը քերականական և իմաստային փոխադարձ կապի մեջ է նախադասության ենթակայի դիրքի հետ, ապա իր առաջադաս կամ ետադաս դիրքերից յուրաքանչյուրում ուղիղ խնդրի՝ լրացյալին կից կամ նրանից բայական այլ լրացումներով ընդմիջված շարադասությունը պայմանավորված է պատճառական բայի իմաստով: Այստեղ կարևոր է հատկապես այն հանգամանքը, թե սեռային ինչպիսի սկզբնատիպ ունի տվյալ պատճառական բայը:

Զեղոք սկզբնատիպ ունեցող պատճառական բայերի ուղիղ խնդիրն ունի գերազանցապես նրան կից շարադասություն, ի տարբերություն ներգործական սկզբնատիպով պատճառական բայերի, որոնց ուղիղ խնդիրը, սովորաբար, ընդմիջվում է լրացյալից միջնորդավորող խնդրով: Զեղոք սկզբնատիպ ունեցող պատճառական բայի ուղիղ խնդիրը, պայմանավորված բայի ցայտուն անցողականությամբ, ունի առավելապես գործողության կրողի գործառություն, ուստի «միջնորդավորող խնդրի գործառությունը մեղմանում է ուղիղ խնդրի քերականական իմաստով, մնալով վերջինիս նշանակության սահմաններում, որպես ակնարկ քերականական այդ յուրահատուկ իմաստի»¹¹: Այդպիսի պատճառական բայերը զուրկ են միջնորդական խնդրից, ինչը հնարավորություն է տալիս ուղիղ խնդրին հանդես գալու բային շարադասորեն կից

¹⁰ Ուղիղ խնդիրն, իհարկե, ոճականորեն ընդգծված չէ, սակայն որոշ շեղումներով ունի, մի բան, որ հատուկ է նախադասության սկզբում գտնվող յուրաքանչյուր անդամի («Զմեացուցաւ ազգի իմոյ կեցուցեսս դու», Ագաթ., 27):

¹¹ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 537:

գործառությանը: Սա շարադասական այն յուրահատկությունն է, որ ունեն այս բայերի ուղիղ խնդիրները ներգործականներից կազմված պատճառականների համեմատությամբ: Օրինակ՝ «Զի գու Տէր... բնակեցուցեր զմեզ» (Սաղ., Դ, 10): «Բաղմացուցից զգավակ քո իբրեւ զաստեղս երկնից» (Մեն., ԻԶ, 4):

Ի տարբերություն շեղոք սկզբնատիպ ունեցողների, ներգործականից կազմված պատճառականները առավել ցայտուն են արտահայտում միջնորդման դադափարը: Լթե ներգործական սեռի պահանջով այդ բայերն ունեն հայցական հոլովով ուղիղ խնդիր, ապա պատճառական սեռային առման իմաստային թիվադրանքով՝ տրական հոլովով միջնորդական ուղիղ խնդիր: Այս երկու խնդիրներից յուրաքանչյուրն իր առանձնահատկություններով մասնակցում է պատճառական բայի գործողության լրիվ իրականացմանը: Պատճառական բայի ենթակայի սկսած գործողությունը տրամաբանորեն սլահանջում է մի առարկա, առանց որի միջնորդության տեղի չի ունենա գործողության անցումը կրող խնդրի վրա: Գործողության տրամաբանական ընթացքի այս յուրահատկությունը իր քերականական արտահայտությունն է դրսևում ներգործականներից կազմված պատճառական բայերով նախադասությունների շարադասական կառուցվածքում: Բայի և խնդրի շարադասությունը նման դեպքերում գերազանցապես ընդմիջված է միջնորդական խնդրով: Օրինակ՝ «Մոտացուցէ նոցա զսուտութիւն դիցապաշտ քարապաշտութեանցն» (Աղաթ., 312): «Ուսուցանել ամենեցուն զօրէնս Աստուծոյ...» (Ն. տ., 256): «Մատուցանէին նմա զհրովաբալկն կայսերն» (Բուզ., 162):

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ստորոգյալին ստորադասվող միջնորդական և ուղիղ խնդիրների հաջորդականության կարգը, եզակի բացառություններով, կայուն է: Խնդիրների առաջադասության դեպքում դրանց հաջորդականության վերոհիշյալ կարգի փոփոխությունը նպատակ ունի առավելագույնս ընդգծել և շեշտել խնդիրներից հատկապես միջնորդականը: Օրինակ՝ «Ամենեցուն զնոյն ուսուցանէր» (Բուզ., 116): «Իսկ ինքն ամենեցուն... զօրօրմութիւնս ուսուցանէր» (Ն. տ.): Ինչ վերաբերում է պատճառական բայով նախադասության մեջ պարագաների կամ անուղղակի խնդիրների հետ ուղիղ խնդրի շարադասական հարաբերությանը, ապա պիտի ասել, որ, պայմանավորված խնդրառու բայի սեռային ակտիվ ձգողականությամբ, ուղիղ խնդիրը (միջնորդական խնդրի բացակայության դեպքում) միասնական բառակապակցության պահպանման քերականական անհրաժեշտությամբ ավելի մոտ է շարադասվում ստորոգյալին, քան որեւիցե անուղղակի խնդրի կամ պարագա: Օրինակ՝ «Հնազանդեցուցէր զամենայն տիեզերս ընդ իւրով ձեռամբ» (Մեղ., 28): «Մառայեցուցանէին զնոսա բռնութեամբ» (Նլք, Ա, 14) և այլն: Եզակի դեպքերում ուղիղ խնդիրը իր լրացալից ընդմիջվում է պարագաներով կամ անուղղակի խնդիրներով: Վերջինս տեղի է ունենում այն ժամանակ, երբ ոճական կամ այլ նպատակով խնդիրը շարադասվել է նախադասության սկզբում կամ վերջում: Օրինակ՝ «Զորքն Հայոց հրամանաւ նորին թագաւորեցուցին ի վերայ ինքեանց զԱրշամ» (Մեղ., 138): «Զօրօրդ մասն ի բոլորմանէ տարւոյն... ըստ ամենայն բարեկայսելութեան անցուցանիցեմք ի Հայս» (Ն. տ., 51): «Բայց միայն զառաքելակարգ կանոնսն ի վերայ ամենեցուն կացուցանէր սուրբ եպիսկոպոսապետն Ներսէս» (Բուզ., 116):

2. Ուղիղ խնդրի տեղը նախադասության մեջ հաճախ պայմանավորված

է այն հանգամանքով, թե իմաստային ինչպիսի ընդգծվածություն ունի ներգործական սեռի բայ-ստորոգյալը, ինչպիսին է նրա իմաստը: Սովորաբար Կոմիտեի ուղիղ խնդիր են պահանջում արդյունքա-հետևանքային գործողություն ցույց տվող բայերը (առնել, կազմել, ծնանել և այլն): Հետևանքի ուղիղ խնդրի հտադասության պատճառն այն է, որ նրա ցույց տված առարկան ստեղծվում է որպես հետևանք բայի գործողության՝ հաջորդելով այդ գործողությանը, որպես նրա տրամաբանական հետևանք և արդյունք: Օրինակ՝ «Ամպը հոսեցին զանձեռն» (Առակք, Գ, 20): «Արար Աստուած զհաստատուրքին» (Մեն., Ա, 7): «Բայց այս Յակոբ գործէր սքանչելիս մեծամեծս» (Բուզ., 39):

Քերականական է նաև բային արմատակից ուղիղ խնդրի հտադաս դիրքը: Արդի քերականագիտության մեջ այն կոչվում է ներքին ուղիղ խնդիր: Վերջինս բայ-ստորոգյալի գործողության անունն է, որն առարկայացվում և դառնում է հենց իր՝ ստորոգյալի ուղիղ խնդիր: Վ. Առաքելյանը գրում է. «Սա նույնպես հետևանք է, բայց հետևանք է ոչ թե տվյալ գործողության, այլ ընդհանուր տեղական գործողության, որի հետևանքը դիտվում է իբրև անկախ առարկայացված գոյական և դառնում է բայի տվյալ կիրառության ուղիղ խնդիրը»¹²: Օրինակ՝ «Զվեց օր գործեսցես զգո՞րծ» (Ղևտ., ԻԳ, 3): «...որ պահէ զպանս գիշերականս» (Յովբ., ԼԵ, 10): «...ուխտեսցուք ուխտս առաջի Տեառն Աստուծոյ» (Բ. Եզր., Ժ, 3):

Զնայած երբեմն բայի և ներքին ուղիղ խնդրի սերտ կապը ընդմիջվում է ենթակայով՝ «Ողբաց Դավիթ զողբս զայս...» (Բ. Թագ., Ա, 17), սակայն գրաբարին մվելի բնորոշը «ենթակա+ստորոգյալ+ներքին ուղիղ խնդիր» շարահասական տարբերակն է: Որ, իրոք, ներքին ուղիղ խնդրի համար գրաբարում սովորականը ստորոգյալին հտադասվող դիրքն է, կարելի է հաստատել հետևյալ կերպ. գրաբարի չեզոք սեռի բայերի նույնարմատ խնդիրը հեշտությանմբ առաջադասվում է բային, որովհետև տրամաբանորեն գործողության հետևանքը չէ, այլ ունի պարագայի կամ անուղղակի խնդրի իմաստ. «Զթաղավն իշոյ թաղեսցի» (Երեմ., ԻԲ, 19): Զանուանի և զլաւ ման մեռանիմք քրիստոնէութեամբ» (ՂԺՊՂ, 306):

Կարելի է կարծել, որ երբ չեզոք սեռի բայերի հայցականով նույնարմատ լրացումն իր սովորական առաջադաս դիրքից անցնում է բայի նկատմամբ հտադաս վիճակի, ինչ-որ չափով ձեռք է բերում ներքին ուղիղ խնդրի իմաստային նրբերանգ, իսկ չեզոք սեռի բայը՝ ներգործականության, սեռային հատկանիշ: Օրինակ. «Ննջեցին զՔուսնս իւրեանց» (Սաղ., ՀԵ, 6): «Մարտիր զպատեհազմն մեր» (Ա. Մակ., ԺԳ, 9):

3. Ծառադաս կիրառություն ունի հատկապես հոգեկան-զգացական գործողության բայերի անորոշ դերբայով արտահայտված ուղիղ խնդիրը. օրինակ՝ «Եւ արգելուին զմեզ խոսել» (Ա. Թեսաղ., Բ, 16): «Եւ նա հրամայէ ոմանց ի նոցանէ երթալ...» (ՄԽՊՂ, 193): Իր լրացումներին հետ հանդես եկող անորոշ դերբայ-ուղիղ խնդիրը, ի տարբերություն առանձին դերբայով արտահայտվածի, առավել կայուն է հտադաս դիրքում: Վերջինս իր հիմքում ունի

12 Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հ. 1, Երևան, 1958, էջ 286, հմտ. Վ. Քոսյան, Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Երևան, 1975, էջ 263, նույնի, Գրաբարի բառակապակցությունները, Երևան, 1980, էջ 139:

մի շարք պատճառներ: Առաջին հերթին՝ նշենք խնդրի ծավալուն բնույթը: Լուսադաս դիրքեր ունեն դրեթե բոլոր այն ուղիղ խնդիրները, որոնք ծավալուն շարահյուսական կառույցներ են (լինեն դրանք դերբայական դարձվածներ, թե ուլ տեսակի բառակապակցութիւններ)¹³: Օրինակ՝ «Եւ հասեալ պատէին զմեծ քաղաքսմն եկեղեցւոյն Աշտիշատու» (Թուգ., 13): «Դրդեցին ժողովեցին զրազմութիւն արանց և կանանց, շինականաց և ազատաց, զքանակայից և զմեծակեցաց» (Եղ., 57): «...գիտես զայդպիսի բանս խօսել զՏէառնէ» (Ն. տ., 13): Նման կառույցների հտադասութիւնը իմաստային քերականական կարևոր նշանակութիւն ունի հատկապես երկկազմ լրիվ նախադասութիւններում: Ծավալուն ուղիղ խնդրի շարադասվելը ենթակայի և ստորոգյալի միջև առաջացնում է զլիավոր անդամների իմաստային կապի զգալի թուլացում: Ուստի, այսպիսի նախադասութիւններում ծավալուն ուղիղ խնդրի հտադասութիւնը քերականորեն նախընտրելի է: Օրինակ՝ «Դու տարապարտուց խօսեցար կոբուսանել զինչս նորա» (Յովբ., Բ, 3): «Դու ինձ հրամայեալս ասել զպատգամն» (ՂփՊՇ, 270):

Ենթակայի կամ ենթակայի խմբի բացակայութիւնը կառուցվածքայնորեն թերի նախադասութիւններում հնարավոր է դարձնում ծավալուն լրացման տեղաշարժը դեպի նախադասութեան սկիզբը, որովհետև խնդրի առաջադաս դիրքն այլևս զլիավոր անդամների իմաստային կապի խանգարիչ հանգամանք չէ: Օրինակ՝ «Արով կտրել զգլուխ երանելայն հրամայեցին» (ՂփՊՇ, 310): «Խրատել և ճրանգեմ... ջանային» (Ն. տ.):

Նախադասութեան սկզբում դերբայական դարձված-ուղիղ խնդրի դրվելը պայմանավորված է հիմնականում նրա ոճական ընդգծմամբ. օրինակ՝ «Բառնալ ի վերայ ամենայնի խորհէր մարն» (ՄեՊՇ, 56):

Դերբայական դարձված-ուղիղ խնդրի շարադասվելը նախադասութեան երկու բևեռների՝ ենթակայի և ստորոգյալի միջև նպատակահարմար չէ նաև այն պատճառով, քանի որ վերջինս կիսաստորոգումային իմաստային նրբերանգ ունեցող շարահյուսական կառույց է, որի շարադասվելը զլիավոր անդամների միջև առաջացնում է նախադասութեամբ արտահայտված սուբյեկտ-սլրնդիկատիվ հարաբերութեան զգալի թուլացում: Նույնիսկ այն դեպքում, երբ ստորոգյալը անցնում է նախադասութեան սկիզբը, վերոհիշյալ պատճառով նրան անմիջապես հաջորդում է ենթական, ապա նոր՝ դերբայական դարձված-ուղիղ խնդիրը: Օրինակ՝ «խորհեցաւ նա դառնալ յերկիր իւր» (Ա. Մակ., Թ, 57): «Յայնժամ հրաման տայ Արտաշէս զոր յարուցանել յարեւելից և ի ճիւսիսոյ բազում յոյժ» (ՄեՊՇ, 122):

Ինչպես կարելի է նկատել, դերբայական դարձված-ուղիղ խնդիրը, շնորհիվ իր կառուցվածքային հատկանիշի (ծավալայնութեան), իմաստային յուրահատկութեան (կիսաստորոգումային արժեքի) և շարադասական առանձնահատկութիւնների (դիրքային բացարձակութեան ձգտման) գրաբարում ստանում է տրոհման որոշակի հնարավորութիւններ: Տրոհում պայմանավորող հանգամանքների դերում կարող են հանդես գալ վերոհիշյալ հատկանիշներից յուրաքանչյուրն առանձին-առանձին և բոլոր հատկանիշները միասին: Վեր-

¹³ Առավել կայուն է ուղիղ խնդրի ծավալուն կառույցների հտադասութիւնը, երբ կառույցի բաղադրիչներն ունեն բացահայտիչ-բացահայտյալ հարաբերութիւն. օրինակ՝ «...բռնացեալ ունէր զմիջոց երկուց ծովուց՝ զՊոնտոն և զՈւկրանոս» (ՄեՊՇ, 46):

ջին հաշվով դերբայական դարձված-ուղիղ խնդրի կառուցվածքային, իմաստային և շարադասական յուրահատկությունները ծառայում են նրա կիսաստորոգումայնության նրբերանգի դրսևորմանը, հաղորդակցման մեջ առանձնահատուկ դերի ձեռք բերմանը, լրացմանը առանձնահատուկ նշանակություն տալուն¹⁴։ Օրինակ՝ «Հրաման ետ մեծ կայսրն օգոստականն Կոստանդիանոս՝ ժողովել ամենայն եպիսկոպոսաց ի քաղաքն Նիկիացաց» (Ագաթ., 834)։ «Եւ Բերզափրանայ հրաման տուեալ Գնէլոյ տակառապետին արքայի Հայոց յերուսաղէմ զՀերովդէս ուսալ» (Մեղ2, 134) և այլն։

4. Ուղիղ խնդիրը հաջորդում է ստորոգյալին նաև այն դեպքում, երբ վերջինս իմաստի սաստկացման նպատակով գործածվում է բայական ավելադրությունների հետ։ Սրանք առաջացնում են ներգործական սեռի բայի իմաստի, այլև ներգործականության սեռային հատկանիշի լրացուցիչ ընդգծում՝ ստորոգյալը դարձնելով նախադասության տրամաբանորեն ամենանշանակ անդամը¹⁵։ Օրինակ՝ «Լքին խոտեցին, մերժեցին ...գտհուրքին պարթևաց» (Ագաթ., 41)։ «Այլէին կիզուին գտունս պաշտաման կրակի» (Եղ., 69)։ «Ցանկանալով ցանկացա ուտել զատիկս զայս ընդ ձեզ» (Եզն., 195)։ «Առաւելապէս պայծառացուցեալ ծաղկեցուցանէր զվարդապետութիւնն» (Կոր., 72)։

5. Գրաբարում ուղիղ խնդրի շարադասության հարցում որոշակի դեր ունի նաև բայ-ստորոգյալի կառուցվածքը։ Խոսքը մասնավորապես վերաբերվում է ներգործական անցյալ դերբայով կամ նույն դերբայով և օժանդակ բայով ստորոգյալների ուղիղ խնդիրների շարադասությանը։ Դասական գրաբարը նախընտրում է անցյալ դերբայով ստորոգյալ ունեցող նախադասությունների «ստորոգյալ+ենթակա+ուղիղ խնդիր» կառուցվածքային տարբերակը։ Օրինակ՝ «Մանուցեալ Որմիզդի զխոհուրդս Խօրն» (Եզն., 80)։ «Առեալ Խոսրովու զբազմութիւն զօրաց իւրոց» (Ագաթ., 21) և այլն։ Այսպիսի նախադասություններում ենթակայի և ուղիղ խնդրի տեղերի փոփոխություն հնարավոր է այն դեպքում, երբ ուղիղ խնդիրը արտահայտված է դերանվամբ։ Օրինակ՝ «Տեսեալ զնա Զրուանայ» (Եզն., 80), Այլ կերպ ասած՝ ուղիղ խնդրի շարադասվելը դերբայ-ստորոգյալի և վերջինիս ենթակայի միջև երբեմն կարող է պատճառ դառնալ նախադասության իմաստի աղավաղման։ Օրինակ՝ «Եւ ընկալեալ Արշակայ Մեծի զգիրն» նախադասության ուղիղ խնդրի շարադասվելը ստորոգյալի և ենթակայի միջև առաջ է բերում անդամների շարահյուսական դերի փոփոխություն՝ ենթական վերածվում է հատկացուցչի («Եւ ընկալեալ զգիրն Արշակա Մեծի»)։

Անցյալ դերբայով բայական բաղադրյալ կառուց-ստորոգյալ ունեցող նախադասություններին ևս հիմնականում հատուկ են «ստորոգյալ+ենթակա+ուղիղ խնդիր» և «ենթակա+ստորոգյալ+ուղիղ խնդիր» կառուցվածքային տարբերակները։ Օրինակ՝ «Ոչ երբեք ասացեալ է նոցա զքեզ զայգ» (Ագաթ., 64)։ «Բո իսկ ծնեալ է զմեզ» (Ն. տ., 590)։ «Նոցա էր փորեալ զխորխորատն...» (Եղ., 55)։ «Ստորոգյալ+ենթակա+ուղիղ խնդիր» կառուցվածքը քնորոշ է նաև այն նախադասություններին, որոնց ստորոգյալը «միադիմի

¹⁴ Վ. Քոսյան, Ժամանակակից հայերենի նախադասության վերլուծության հարցեր, Երևան, 1976, էջ 130։

¹⁵ Այդպիսի նախադասություններում ենթակաները սովորաբար զեղչվում են։

եղանակիչ բայ-+անորոշ դերբայ» բայական կառուցն է: Օրինակ՝ «Որպէս և պարտ էր ճանաչել առն զփռքն միւսոյ ևս լաւագունի քան դինքն» (ՂՓՊԶ, 18): «Պիտոյ է ինձ յղել զԲեզ առ Թագաւորն Պարսից Շապուհ» (Բուզ., 305):

Գ. Քերականական դիրք է ուղիղ խնդրի առաջադասութիւնը, երբ խնդրը արտահայտված է հարաբերական դերանուններով: Վերջիններս իրենց խոսքիմասային յուրահատուկ իմաստի շնորհիվ ապահովում են ուղիղ խնդրի բացարձակ առաջադասութիւն: Ինչպես իրավամբ նկատում է Մ. Նիկիտինան, հարաբերական դերանունը միշտ ակնարկում է այնպիսի բառ կամ հասկացութիւն, որը գտնվում է նախորդ խոսքում: Բոլոր դերանունների նման տիրապետելով մեծ վերացականութիւն, հարաբերականը իր իմաստով կարող է վերաբերվել յուրաքանչյուր բառի և որոշակի իմաստ է ձեռք բերում միայն կոնտեքստում¹⁶, Ահա թե ինչու ձգտում է մոտ դրվել այն բառին, որից քաղում է իր նշանակութիւնը: Օրինակ՝ «Նոյնպէս և զմերն ի Հայկայ մինչև զԱրայն դեղեցիկ, զոր նսպան կաթոսն Շամիրամ» (ՄԽՊԶ, 20), «Զի՛նչ վարեսցէ մարդ, զնոյն և հնձեսցէ» (Ագաթ., 518) «Ո՞ր այն ոք իցէ հատուցանող վստակոցն քոց, զոր կոչես դու արարիչ» (ն. տ., 6)¹⁷:

Դ. Քերականական դիրք է նաև հարցական դերանուն-ուղիղ խնդրի առաջադասութիւնը: Որպես հարցական կառուցներում հարցի ուժը պարունակող անկամ, այդ դերանունը, ինչ պաշտոն էլ ունենա, դրվում է նախադասութեան մեջ ամենաշեշտված տեղում՝ սկզբում: Օրինակ՝ «Զի՛նչ դոքա ամբաստանեն զքէն» (Մատթ., ԻԶ, 62): «Զի՛նչ հատուցուր մեք Աստուծոցն...» (Եղ., 18) և այլն:

Հոգվածի սահմաններում փորձ արվեց նկարագրել մի քանիսն այն գործոններից, որոնց ազդեցութեամբ գրաբարում ձևավորվում է ուղիղ խնդիրների, այսպես կոչված, քերականական շարադասութիւնը: Կարծում ենք, որ ուղիղ խնդիրների շարադասութեան հարցին վերաբերող որոշ ընդհանուր դրույթներ կարելի է հաշվի առնել նաև նախադասութեան այլ անդամների շարադասական դիրքերի կոնկրետ նկարագրութեան ընթացքում:

ՀԱՄԱՌՈՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ագաթ.—«Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1914:
2. Առակք—Առակք ՍԱՂՈՄՈՆԻ:
3. Բուզ.—«Փառատոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912:
4. Ս. Գիրք.—«Աստուածաշունչ գիրք հնոց և նորոց կտակարանաց շարակարգութեամբ նախնեացն մերոց եւ ճմարտասիրաց Թարգմանչաց», Ս. Պետերբուրգ, 1817:
5. Եղն.—«Եղեկայ Կողբացւոյ Եղծ աղանդոց», Թիֆլիս, 1914:
6. Բ. Եզր.—Գիրք Եզրասայ Երկրորդ:
7. Ելք.—Գիրք Ելից:
8. Եղ.—«Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին», Երևան, 1957:
9. Երեմ.—Մարգարէութիւն Երեմիայի:
10. Բ. Թագ.—Գիրք Երկրորդ Թագաւորաց:
11. Ա. Թեսաղ.—Թուղթ Երանելոյն Պօղոսի առաքելոյ առ Թեսաղոնիկեցիսն առաջներորդ:
12. Թիւք.—Գիրք Թուոց:

¹⁶ «Учёные записки Кабардинского педагогического института», вып. 1, 1940, с. 102.

¹⁷ Պարզ նախադասութեան շարադասութեան քննութիւնը չի կարելի պատկերացնել հաշորդող և նախորդող նախադասութիւնների հետ իմաստային և քերականական կապերից դուրս:

13. ՄեՆ.—Գիրք Մենդոց՝
14. Կոր.—Կորիւն, Վարդ Մաշտոցի, Երևան, 1941:
15. Ղֆղշ.—Ղազարայ ֆարպեցու Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1907:
16. Ղևո.—Գիրք Ղևոնկանց՝
17. Մեղշ.—«Մովսիս Խորենացու Պատմութիւն Հայոց», Տիֆլիս, 1913:
18. Ա. Մակ.—Գիրք Առաքնորդ Մակարայեցուց՝
19. Մատթ.—Աւետարան ըստ Մատթէոսի՝
20. Յովք.—Գիրք Յորայ՝
21. Մադ.—Գիրք Սաղմոսաց՝
22. Ն. տ.—նույն տեղում՝

РАСПОЛОЖЕНИЕ ПРЯМОГО ДОПОЛНЕНИЯ В КЛАССИЧЕСКОМ ГРАВАРЕ

СЕРГО АЙРАПЕТЯН

Резюме

Одной из малоисследованных проблем синтаксиса древнеармянского языка V в. является порядок слов простого предложения.

Указывая на свободный порядок слов в составе предложения, грамматисты тем самым для каждого его члена наметили канонические (прямые) позиции.

Канонической считалась доминирующая позиция члена в составе предложения, в частности для прямого предложения—его постпозиция к сказуемому. Однако статистические исследования, проведенные на материале историко-литературных памятников V в., показывают, что постпозиция прямого объекта отнюдь не является господствующей и, если под прямыми имеются в виду обычные (грамматические) позиции, то такими могут быть как далеко не все постпозиционные, так и некоторые препозиционные расположения прямого объекта.

Разнородные факторы расположения прямого дополнения классифицируются по некоторым принципам. К числу последних относятся морфолого-семантический или грамматический, ситуативно-контекстуальный, выделительный принципы, а также принцип слабых или нейтральных позиций.